

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 6/5

4 փետրվարի 2013թ.

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի 15.01.2013թ-ի նիստում քննության է առնվել <Ավալոն> ՍՊԸ գրությամբ բերված գանգատը ՀՀ ԿԱ ՊԵԿ ԽՀՎ ՀՏ 03.12.2012թ. թիվ 1101815 ստուգման ակտի դեմ: Արդյունքում ընդունվել է որոշման նախագիծ, որի համաձայն վերոգրյալ ստուգման ակտը թողնվել է անփոփոխ: Մասնավորապես.

համաձայն ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 15.11.2012թ. թիվ 1101815 հանձնարարագրի <Ավալոն> ՍՊԸ-ում (այսուհետ նաև ընկերություն) կատարվել է աշխատողի աշխատանքի ընդունումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ձևակերպելու ճշտության ստուգում, որն ընդգրկել է 13.07.2012թ-ից մինչև ստուգման ավարտն ընկած ժամանակաշրջանը: Արդյունքում 03.12.2012թ-ին կազմվել է թիվ 1101815 ստուգման ակտը (այսուհետ նաև ստուգման ակտ), որով լրացուցիչ գանձման է առաջադրվել ընդամենը 25.200.000 դրամ:

Ստուգման ակտի 1-ին կետով մասնավորապես արձանագրվել է.

Համադրելով <Ավալոն> ընկերությունում փաստացի աշխատանքային գործունեությամբ զբաղված անձանց և ընկերությունում առկա աշխատանքային պայմանագրերը (հրամանները) պարզվեց, որ ընկերությունում փաստացի աշխատանքային գործունեությամբ զբաղված վարձու աշխատողներից՝ թվով 16 (տասնվեց) աշխատակից Ռոբերտ Բաղդասարյանի (բանվոր), Հովհաննես Բարոյանի (բանվոր), Արմեն Հովհաննիսյանի (բանվոր), Բագրատ Ասատրյանի (բանվոր), Գագիկ Շահբազյանի (բանվոր), Սերյոժա Խաչատրյանի (բանվոր), Արտակ Դավթյանի (բանվոր), Հայկ Նիկոլյանի (ամրանագործ), Իշխան Սաֆարյանի (մոնտաժող), Սամվել Թումանյանի (բանվոր), Բաբկեն Շահինյանի (քար հղկող), Արամ Սազյանի (քար հղկող), Գագիկ Պետրոսյանի (ծեփագործ), Հայրիկ Ումրշաղյանի (ծեփագործ), Վոլոդյա Ավետիսյանի (երեսպատող) և Լիպարիտ Սիմոնյանի (բանվոր) հետ աշխատանքի ընդունումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով գրավոր ձևակերպված չէր, բացակայում էին գրավոր աշխատանքային պայմանագրերը և աշխատանքի ընդունման մասին գրավոր հրամանները: Ինչպես նաև թվով 26 (քսանվեց) վարձու աշխատողներ տարբեր ժամանակահատվածներում աշխատել են առանց աշխատանքային պայմանագրերի (հրամանների): Արդյունքում ստուգմամբ արձանագրվեց ընդամենը թվով 42 չձևակերպված վարձու աշխատողներ:

Խախտվել է ՀՀ Աշխատանքային օրենսգրքի 14-րդ հոդվածի և 102-րդ հոդվածի 1-ին կետի պահանջները: Համաձայն <Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ մասի, աշխատողի աշխատանքի ընդանումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով գրավոր չձևակերպելու համար գործատուից ենթակա է գանձման պետ. բյուջե յուրաքանչյուր չձևակերպված աշխատողի համար սոցիալական վճար 600.000 դրամի չափով, եթե չձևակերպված վարձու աշխատողների թվաքանակը գերազանցում է իննը: Ընդամենը ենթակա է վճարման սոցիալական վճար 25.200.000 դրամի չափով:

<Ավայրն> ՍՊԸ գանգատում մասնավորապես նշված է.

Համաձայն ՀՀ ԿԱ ՊԵԿ 2012 թվականի նոյեմբերի 15-ի թիվ 1101815 հանձնարարագրի՝ 19.11.2012թ-ից մինչև 23.11.2012թ-ն ընկերությունում կատարվել է ստուգում՝ աշխատողների աշխատանքի ընդունումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ձևակերպելու ճշտության վերաբերյալ:

Ստուգման արդյունքում արձանագրվել է, որ թվով 16 աշխատակից ձևակերպված չեն: Թվով 26 վարձու աշխատողների աշխատանքային պայմանագրերի և նրանց հայտարարությունների միջև կան աշխատանքի ժամանակահատվածի անհամապատասխանություններ, որոնց պատճառով էլ նրանք դիտվել են, որպես չձևակերպված աշխատողներ: Կազմվել է արձանագրություն, որով ընկերությանը պարտավորեցվել է վճարել սոցիալական վճար՝ 25.200.000 դրամի չափով (42 X 600.000):

Հաշվի առնելով վերը նշված անհամապատասխանությունները՝ ակտում կատարվել է գրառում, որ ընկերության տնօրինությունն առարկում է ակտի դեմ:

Ընկերությունը խնդրում է աջակցել և հնարավորություն տալ ներկայացնել իրենց առարկությունները և դրանց հիմնավորումները:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), լսելով ընկերության ներկայացուցիչների և ստուգումն իրականացրած պաշտոնատար անձանց ներկայացված փաստարկները, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ եզրակացության, որ ընկերության գանգատը հիմնավոր չէ:

Քննարկման ընթացքում ընկերության ներկայացուցիչները նշեցին, որ ստուգման ակտով արձանագրվածը չի համապատասխանում իրականությանը: Մասնավորապես, ըստ ստուգման ակտի, ընկերությունում փաստացի աշխատանքային գործունեությամբ զբաղված վարձու աշխատողներից՝ թվով 16 (տասնվեց) աշխատակիցների հետ աշխատանքի ընդունումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով գրավոր ձևակերպված չէր, բացակայում էին գրավոր աշխատանքային պայմանագրերը և աշխատանքի ընդունման մասին գրավոր հրամանները: Սակայն, նշված թվով 16 աշխատակիցներից թվով 9 ընդհանրապես ընկերության աշխատակիցներ չեն հանդիսացել: Հիշատակված թվով 16 աշխատակիցների կազմում է ընդգրկվել նաև ընկերության աշխատակցի որդին, որը ստուգման պահին գտնվել է շինարարական հրապարակում, քանի որ ուտելիք է բերած եղել հորը:

Ինչ վերաբերվում է ստուգման ակտով արձանագրված թվով 26 (քսանվեց) վարձու աշխատողներին, որոնք տարբեր ժամանակահատվածներում աշխատել են առանց աշխատանքային պայմանագրերի (հրամանների), ապա դրանցից 14-ը, ըստ ընկերության ներկայացուցիչների, հանդիսացել են նոր աշխատանքի ընդունված աշխատակիցներ, որոնք ընկերությունում աշխատել են ընդամենը մեկ կամ երկու օր, և վերջիններիս հետ աշխատանքային պայմանագրերի կնքման գործընթացը դեռևս ավարտված չի եղել:

Ստուգումն իրականացրած պաշտոնատար անձինք նշեցին, որ ստուգման ակտում հիշատակված անձանց արձանագրման գործընթացն իրականացվել է ընկերության հիմնադրի և բրիգադավարի մասնակցությամբ: Մասնավորապես, վերջիններիս կողմից ստուգման ակտում հիշատակված անձինք ներկայացվել են որպես ընկերության աշխատակիցներ:

Ստուգումն իրականացրած պաշտոնատար անձինք նշեցին նաև, որ բոլոր անձանց, որոնք տվել են բացատրություն, ըստ էության տրվել է մեկ հարց, թե երբվանից են նրանք աշխատում <Ավալոն> ՍՊԸ-ում: Հետևապես ընկերության ներկայացուցիչների վերոգրյալ պնդումները չեն կարող հիմնավոր համարվել:

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 10-ի <Գանգատարկման խորհուրդ ստեղծելու և վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովների որոշումների քննարկման կարգը հաստատելու մասին> N 1361-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետի, Հանձնաժողովի որոշման նախագիծը ուղարկվել է վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման խորհուրդ (այսուհետ՝ Գանգատարկման խորհուրդ): Որոշման նախագծի վերաբերյալ Գանգատարկման խորհուրդը տվել է դրական եզրակացություն:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով <<Հարկային ծառայության մասին> ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Ստուգման ակտը թողնել անփոփոխ:

Որոշմանը չհամաձայնվելու դեպքում տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձն իրավունք ունի բողոքարկել դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝



S.ԲԱՐՍԵՂՅԱՆ